

տանքի տէր մարդիկը ի՞նչ բերք կուտան մարդուս որ անոր տեղը ուրիշ բերք առնեն իրաւացի կերպով :

— Եւսպիսիները իրենց աշխատանքովը կը գնեն ուրիշին վաստակը . վասն զի ինչպէս որ մեր ամէն պիտոյքը նիւթական չեն , այսպէս ալ ամէն բերք նիւթական պէտք չէ ըլլայ : Հասարակաց հանգստութեանը և խաղաղութեանը վրայ հոգ ունեցողին աշխատանքը , նմանապէս ուրիշներուն առողջութեանը և զբօսանքին ուշ դնողին ջանքը՝ նիւթական բերքեր չեն , բայց մեզի խիստ հարկաւոր ու օգտակար են . ուրեմն մենք իրենց մտաւոր բերքին տեղը պարտական ենք նիւթականը տալու , որպէս զի իրենք ալ անով իրենց ապրուստն ու հանգըստութիւնը գտնեն :

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Նաութը ու ժողովընելու և պաշտօնը ընելու հարց :

ԳԱՂԱՅԻՔԻ քանի մը գաւառներուն մէջ հին ու անպտուղ ծառերը ասանկ կը դարմանեն : Եւնան ժամանակ պարտիզպանը սուր ու տափակ դանակով մը ծառին բունին ու խոշոր ճիւղերուն վրայի ճաթըռտած ու ճեղքուած կեղևներուն առջի կարգը բոլոր կըսրկորէ ու կը վերցընէ , անանկ որ ծառին բունը վերէն վար մերկ կերևնայ . ետքը տակի կեղևը շուտով մը կը հաստընայ ու նորէն բոլոր ծառը կեղև կը կապէ : Եւ հնարքին մէկ աղէկութիւնն ալ ան է , որ կեղևին մէջտեղը որչափ որ ճաթի ու որդ կայ՝ բոլորն ալ կը թափին :

Եւ թիւն շաքարի հասցընելու հարց :

ԽՈՒՆԱՒ ու ցած երկիրներու մէջ լուբիան՝ խիստ դժուար կը հասուն.

1 Գոտարի :

նայ . անոր ճարը աս է . երբոր կընայիս որ կեղևնին լեցուեր է , մէջի հատերն ալ սովորականին չափ մեծցեր են , արմատովը հողուն մէջէն հանէ , ճիւղերը պզտի խեղանքերու վրայ կապէ ու թող . միայն նայէ որ արմատնին գետին դպած ըլլայ՝ առանց հողուն մէջ թաղուելու . և աս գործողութիւնս արեւոտ տեղ մը ըրէ : Աւթօրուան մէջ տերևները կը թուռնան ու կը թափին , լուբիաներն ալ կը ձեւաւորուին ու կը չորնան : Եւ գործողութիւնս չոր ու տաք տարիներն ալ կըրնաս ընել , որովհետեւ օգտակար է . մէյմը որ աս կերպով գէթ իրեք շաբաթ առաջ կը հասուննայ լուբիան ու աւելի մատղաշ ու համով կը ըլլայ . երկրորդ որ իրեք շաբաթ առաջ կըրնաս երկիրդ մաքրել , որ աշնան վարուցանին համար շատ օգտակար է . որովհետեւ որչափ երկիրդ շուտով մաքրես՝ այնչափ ալ աշնան ցանելիքներդ շուտով կընաս ցանել , որով շուտ ալ կը բուսնին :

ՏՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Եւ թիւն շաքարի հարց :

Եւ 2 ունկի գինիի մոխիր՝ 2 ունկի սպիտակադեղ՝ 1 ունկի պաղլեղ՝ . աս իրեք նիւթն ալ ծեծէ ու քիչ մը ջրով իրարու հետ շաղուէ , ու կակուղ լաթ մը ան բաղադրութեան մէջ թաթխելով արծաթեղէնը շփէ , նոր արծաթի պէս կը փայլի : Արջը պարզ ջրով լուա ու ցամքեցուր : Այն որ արծաթեղէնը խորտուբորտ տեղուանք ունի , լաթի տեղ վրձին՝ կընաս գործածել :

1 Գոտարի :

2 Խաքի-դէճ :

3 Ըստ :

4 Փըլ :